

Ապագա Հայկականի Համաժողով

Մասնակիցների ընտրության մեթոդաբանություն

Վերջնական տարբերակ՝ առ 23/1/2023թ.

Մույն փաստաթուղթն ամփոփում է 2023թ. մարտի 10-12-ը կայանալիք քաղաքացիական ասամբլեայի մասնակիցների ընտրության մեթոդաբանությունը:

Ընտրության հիմքում որոշիչ են համարվել ստորև նշված չափանիշները՝ հաշվի առնելով հայ հասարակության առաձնահատկությունները:

Խումբ՝ Սփյուռք/ հայաստանաբնակներ և արցախաբնակներ

Մեռ՝ արական/ իգական

Տարիք՝ 18-30/ 31-45/ 46-60/ 61 +

Կրթություն՝ միջնակարգ կամ ավելի ցածր/ ավագ դպրոց կամ միջին մասնագիտական/ բուհ և ավելի բարձր

Վայր՝ Ռուսաստան/ ԱՄՆ/ Ֆրանսիա/ Վրաստան/ Լիբանան/ այլ (Սփյուռքի խմբի համար)

Բնակավայր՝ քաղաքային/ գյուղական/ մայրաքաղաք (Հայաստանի և Արցախի խմբերի համար)

Խումբ	%	Մեռ	%	Տարիք	%	Կրթություն	%	Երկիր/ Բնակավայր	%
Խումբ 1 Սփյուռք	50	Արական	49	18-30	22	Միջնակարգ կամ ավելի ցածր	22	Ռուսաստան	39
		Իգական	51	31-45	27	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	42	ԱՄՆ	20
				46-60	25	Բուհ և ավելի բարձր	36	Ֆրանսիա	9
				61 +	26			Վրաստան	6
								Թուրքիա	2
								Իրան	2
								Եվրոպա (բցռ. Ֆրանսիա)	6
								Նախկին ԽՄ (բցռ Ռուսաստան և Վրաստան	6
								Մերձավոր Արևելք (բցռ. Թուրքիա և Իրան)	4

						Լատինական Ամերիկա	3		
						Այլ	3		
Խումբ 2 Հայաստան	45	Արական	47	18-30	22	Միջնակարգ կամ ավելի ցածր	55	Քաղաքային	27
		Իգական	53	31-45	31	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	21	Գյուղական	36
				46-60	23	Բուհ և ավելի բարձր	24	Երևան	37
				61 +	24				
Խումբ 3 Արցախ	5	Արական	49	18-30	25	Միջնակարգ կամ ավելի ցածր	30	Քաղաքային	25
		Իգական	51	31-45	25	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	30	Գյուղական	25
				46-60	25	Բուհ և ավելի բարձր	40	Ստեփանակերտ	50
				61 +	25				

Աղյուսակ 1. Ընտրության հիմնական չափանիշներ և ներկայացվածության տոկոսներ

Հիմնավորում

Միջուկ

Ընտրանքն արդյունավետ դասակարգելու համար խորհուրդ է տրվում որպես ընտրության հիմք վերցնել առկա վիճակագրական տվյալները: Այնուամենայնիվ, որոշ տվյալներ (օրինակ՝ սփյուռքահայերի սեռի կամ կրթական մակարդակի բաժանումը) հնարավոր է հասանելի չլինեն. նման դեպքերում խորհուրդ է տրվում ընտրության ժամանակ առաջնորդվել տարբեր խմբերի արդար ներկայացվածության սկզբունքով:

Համարվում է, որ Միջուկում ավելի շատ հայ է բնակվում, քան Հայաստանում: Այնուամենայնիվ, բուն արդար ընտրության սկզբունքի վրա հիմնվելով՝ առաջարկվում է ընտրանքը հավասարապես բաշխել Միջուկի (50%) և Հայաստանի ու Արցախի (44+6%) միջև:

Գոյություն չունեն հավաստի աղբյուրներ, որոնք տարբեր երկրներում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ համադրելի տվյալներ կտրամադրեին՝ բացառությամբ Վիքիպեդիայի¹ էջում և 1986թ.² և 2012թ.³ հայկական հանրագիտարաններում գետեղված տվյալներից, որոնք և հիմք են ընդունվել մեթոդաբանության մշակման համար: Այդ տվյալների հիման վրա կատարվել են հիպոթետիկ

¹ https://en.wikipedia.org/wiki/Armenian_population_by_country

² [https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_\(Soviet_Armenian_Encyclopedia\)_13.djvu/27](https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%8D%D5%B8%D5%BE%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6_(Soviet_Armenian_Encyclopedia)_13.djvu/27)

³ https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:Armenia_Encyclopedia.djvu/914

հաշվարկներ, ու հաշվի առնելով տվյալների՝ ըստ երկրի համեմատության անհնարինությունը՝ Մփյուռքի մասնակիցների ընտրությունը առաջարկվում է իրականացնել 6 խոշոր սփյուռքահայ համայնքների հետևյալ երկրներից՝ Ռուսաստան՝ 39, ԱՄՆ՝ 20, Ֆրանսիա՝ 9, Վրաստան՝ 6, Թուրքիա՝ 2, Իրան՝ 2, ինչպես նաև հետևյալ 5 տարածաշրջանից՝ Եվրոպա (բացառությամբ Ֆրանսիայի)՝ 6, նախկին Խորհրդային Միություն (բացառությամբ Ռուսաստանի և Վրաստանի)՝ 6, Մերձավոր Արևելք՝ (բացառությամբ Թուրքիայի և Իրանի)՝ 4, Լատինական Ամերիկա՝ 3, այլ՝ 3:

Զնայած թվացյալ բարդությանը՝ այսպիսի ընտրությունը ապահովում է նաև աշխարհագրական բազմազանություն և նվազագույնը 23 երկրի/համայնքի ներկայացվածություն: Սա կարող է շատ խորհրդանշական լինել առաջին Համաժողովի համար՝ ցույց տալով Մփյուռքի լայն բաշխվածությունը և չառաջացնելով բացառված լինելու զգացում:

Որպես սփյուռքահայերի սեռատարիքային/կրթական բաշխման հիմք՝ խորհուրդ է տրվում հիմնվել այն երկրների և/կամ տարածաշրջանների ազգային վիճակագրության վրա, որտեղից ընտրվելու են մասնակիցները՝ սահմանելով համամասնական առաջնահերթություն՝ ելնելով այդ երկրների ներկայության տեսակարար կշռից: Այս վիճակագրությունը, սակայն, սկզբունքորեն անհնար է հաշվարկել, քանի որ երկրների վերջնական ցանկը պարզ չէ: Այդ պատճառով փոխարենն առաջարկվում է օգտագործել հետևյալ տարածաշրջանային մոտեցումը՝ հիմնվելով ՄԱԿ-ի գլոբալ ժողովրդագրական տվյալների վրա (սահմանափակվելով միայն Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Ասիայի ժողովրդագրական տվյալներով)⁴: Նշված մոտեցմամբ ըստ սեռի բաժանումը կունենա հետևյալ տեսքը՝ արական՝ 49.4%, իգական՝ 50.6%: Դիտարկվող տարիքային խմբերի համար բաշխվածությունը հետևյալն է. աշխարհի բնակչության 21.6%-ը 18-30 տարեկան է, 27.3%-ը՝ 31-45 տարեկան, 24.6%-ը՝ 46-60 տարեկան, և 26.5%՝ 61 տարեկան ու բարձր: Ինչ վերաբերում է կրթությանը, Եվրոպայի⁵ (23.6%-ը՝ միջնակարգ, 45.3%-ը՝ քոլեջ և 31.1%-ը՝ բուհ), Հյուսիսային Ամերիկայի⁶ (26.3%-ը՝ միջնակարգ, 38.8%-ը՝ քոլեջ և 34.9%-ը՝ բուհ) և Արևմտյան Ասիայի⁷ (14.5%-ը՝ միջնակարգ, 38.3%-ը՝ քոլեջ և 47.2%-ը՝ բուհ) վերաբերյալ հավաքագրված տվյալները թույլ են տալիս հաշվարկել Մփյուռքի ընտրանքի կրթական բաշխվածության միջին ցուցանիշները, որոնք են՝ 22.4%-ը՝ միջնակարգ կամ ավելի ցածր, 42.1%-ը՝ ավագ կամ միջին մասնագիտական, իսկ 35.4%-ը՝ բուհ և ավելի բարձր:

Հայաստան

Որպես ընտրանքի սեռատարիքային համամասնության հիմք է ընտրվել վերջին պաշտոնական ազգային վիճակագրությունը (2021-2022թթ)⁸: Ինչպես նկատվում է, Հայաստանում 2022թ. դրությամբ ըստ սեռի համամասնությունը հետևյալն է՝ 47.2% արական և 52.8%՝ իգական⁹: Նշված խմբերում Հայաստանի բնակչության տարիքային համամասնությունը (18+ տարեկանների շրջանում) ունի հետևյալ պատկերը՝ Հայաստանի բնակիչների 21.5%-ը 18-30 տարեկան են, 31.4%-ը՝ 31-45 տարեկան, 22.9%՝ 46-60 տարեկան, իսկ 24.1%՝ 61 տարեկան և բարձր¹⁰: Հայաստանի բնակչության կրթական

⁴ <https://population.un.org/wpp/Download/Standard/Population/> Բնակչությունը ըստ տարիքի միայն՝ երկու սեռը, արական, իգական(ներբեռնվող հղումներ)՝ 01.07.2021թ. դրությամբ

⁵ https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Educational_attainment_statistics#:~:text=In%202021%2C%2023.6%20%25%20of%20people,attainment%20level%20i.e.%20tertiary%20education.

⁶ https://en.wikipedia.org/wiki/List_of_U.S._states_and_territories_by_educational_attainment#:~:text=34.9%25%20of%20Americans%20over%20the,was%20West%20Virginia%20at%2024.1%25

⁷ https://en.wikipedia.org/wiki/Education_in_Asia

⁸ <https://www.armstat.am/en/?nid=82&id=2535>

⁹ https://www.armstat.am/file/article/demog_2022_2.pdf, էջ 38

¹⁰ Նույնը, էջ 45, համամասնորեն բաշխված ընտրված տարիքային խմբերի միջև

համամասնությունը վերցված է 2011թ.-ի մարդահամարից¹¹ (քանի որ ավելի թարմ տվյալներ չկան, իսկ 2022թ. նոր մարդահամարը դեռևս հրապարակված չէ) և ունի հետևյալ պատկերը¹²՝ 54.6%-ն ունեն միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն, 21.5%-ը՝ ավագ կամ միջին մասնագիտական կրթություն, և ևս 23.9%-ն ունեն բարձրագույն կամ ավելի բարձր կրթություն: Բնակչության 36.9%-ը բնակվում է Երևանում¹³, 27.0%-ը՝ այլ քաղաքային համայնքներում, իսկ 36.1%-ը՝ գյուղական համայնքներում:

Որպես քաղաքային/գյուղական/Երևան բաշխման այլընտրանք առաջարկվում է դիտարկել մասնակիցների համամասնական բաշխումը ըստ Հայաստանի մարզերի: Այս տարբերակում բաշխումը կունենա հետևյալ տեսքը

Մարզ	Բնակչու- թյուն ¹⁴	Քաղաքա- յին	Գյուղա- կան	Համամաս- նություն (%)	Մասնակից- ների քանակը	Քաղաքա- բնակ մասնակից- ներ	Գյուղա- բնակ մասնակից- ներ
Արարատ	257,000	72,200	184,800	8.7	8	2	6
Արմավիր	264,700	82,600	182,100	8.9	8	2	6
Արագածոտն	124,700	26,500	98,200	4.2	4	1	3
Գեղարքունիք	227,700	65,800	161,900	7.7	7	2	5
Կոտայք	251,400	136,800	114,600	8.5	7 ¹⁵	4	3
Լոռի	211,300	124,200	87,100	7.1	6	4	2
Շիրակ	230,000	133,700	96,300	7.8	7	4	3
Սյունիք	134,500	90,400	44,100	4.5	4	3	1
Տավուշ	119,600	49,800	69,800	4.0	4	2	2
Վայոց Ձոր	47,500	16,200	31,300	1.6	1	0	1
Երևան	1,093,200			36.9	34 ¹³	0	0
Ընդամենը	2,961,600	798,200	1,070,200	100	90	24	32

Աղյուսակ 2. Ընտրանքի բաշխում Երևանի/Հայաստանի մարզերի միջև 90 մասնակցի համար

Առավել մանրամասն ընտրանք կատարելու անհրաժեշտության դեպքում (մասնակիցներին ընտրել համամասնորեն յուրաքանչյուր մարզից ըստ քաղաքային/գյուղական բաժանման), հղում կարվի Աղյուսակ 2-ի վերջին երկու սյունակում ներկայացված հաշվարկներին:

Արցախ

Թեև Արցախի բնակչության համամասնությունը Հայաստանի բնակչության նկատմամբ կազմում է 1:20 կամ 1:19, այստեղ՝ կոնկրետ այս նախագծի շրջանակներում, այն դիտարկվում է որպես

¹¹ <https://armstat.am/file/doc/99478273.pdf>, էջ 156

¹² Այս ցուցանիշը ներառում է ներկայիս ուսանողներին

¹³ https://www.armstat.am/file/article/population_04_2022.pdf, էջ 3

¹⁴ https://www.armstat.am/file/article/population_04_2022.pdf էջ 3-6

¹⁵ Առավել ճշգրիտ քաղաքային-գյուղական բաժանման համար Կոտայքի մասնակիցների թիվը կլորացված է դեպի ներքև (7.6ը կլորացվել է 7.0): Երևան քաղաքի մասնակիցների քանակը համապատասխանաբար կլորացվել է դեպի վեր

առանձին միավոր՝ ընտրված մասնակիցների նվազագույն ընդունելի թվով, որը կարող է տրամաբանական թվալ և Արցախի համար հավասար ներկայացվածություն ապահովել: Կարևոր է նշել, որ առաջարկվող մեթոդաբանության մեջ Արցախը դիտարկվում է որպես առանձին միավոր (քանի որ այն ունի իր սեփական կառավարությունը և չի կարող համարվել Հայաստանի մաս), իսկ տոկոսային հարաբերակցությունը հաշվարկվում է՝ ելնելով ընդհանուր խմբում փոքր թվերի համապատասխանությունից: Արցախում հավաստի վիճակագրությունը 2017թ.-ով ¹⁶ է ներկայացված, ուստի 44-օրյա պատերազմի ազդեցությունը ժողովրդագրության վրա վիճակագրորեն հնարավոր չէ գնահատել: 2017թ. տվյալներով՝ Արցախի բնակչության 48.8%-ը արական սեռի է, իսկ 51.2%-ը՝ իգական սեռի: Տարիքային խմբերի և կրթական մակարդակի բաշխվածությունները հնարավոր չէ հաշվարկել, այսպիսով առաջարկվում է յուրաքանչյուր տարիքային խմբի համար վերցնել 25%: Ինչ վերաբերում է կրթությանը, այստեղ ևս առաջնահերթությունը տրվում է բուհական կրթությանը (40%՝ ի տարբերություն մյուս երկու խմբերի՝ յուրաքանչյուրը 30% ներկայացվածությամբ), իսկ բնակավայրերի առումով առաջարկվում է մասնակիցների 50%-ին ընտրել Ստեփանակերտից իսկ մնացած 50%-ը հավասարապես բաշխել այլ քաղաքային և գյուղական համայնքների միջև:

Ամփոփում

Եթե քաղաքացիական ասամբլեայի մասնակիցների թիվը սահմանվում է 200, ապա իրենց ընտրանքն ու բաշխումը կունենա հետևյալ տեսքը՝

Խումբ	№	Սեռ	№	Տարիք	№	Կրթություն	№	Երկիր/ Բնակավայր	№
Խումբ 1 Սփյուռք	100	Արական	49	18-30	22	Միջնակարգ կամ ավելի ցածր	22	Ռուսաստան	39
		Իգական	51	31-45	27	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	42	ԱՄՆ	20
				46-60	25	Բուհ և ավելի բարձր	36	Ֆրանսիա	9
				61 +	26			Վրաստան	6
								Թուրքիա	2
								Իրան	2
								Եվրոպա (բցռ. Ֆրանսիա)	6
								Նախկին ԽՍ (բցռ Ռուսաստան և Վրաստան	6
								Մերձավոր Արևելք (բցռ. Թուրքիա և Իրան)	4

¹⁶<https://artsakhpress.am/arm/news/69194/> (հայերեն)

Խումբ	№	Սեռ	№	Տարիք	№	Կրթություն	№	Երկիր/ Բնակավայր	№
								Լատինական Ամերիկա	3
								Այլ	3
Խումբ 2 Հայաստան	90	Արական	42	18-30	20	Միջնակարգ կամ ավելի ցածր	49	Արարատ	8
		Իգական	48	31-45	27	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	19	Արմավիր	8
				46-60	21	Բուհ և ավելի բարձր	22	Արագածոտն	4
				61 +	22			Գեղարքունիք	7
								Կոտայք	7
								Լոռի	6
								Շիրակ	7
								Սյունիք	4
								Տավուշ	4
								Վայոց Ձոր	1
								քաղաքային	24
								գյուղական	32
								Երևան	34
Խումբ 3 Արցախ	10	Արական	5	18-30	2	Միջնակարգ կամ ավելի ցածր	3	Քաղաքային	3
		Իգական	5	31-45	3	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	3	Գյուղական	2
				46-60	3	Բուհ և ավելի բարձր	4	Ստեփանակերտ	5
				61 +	2				

Աղյուսակ 2. 200 մասնակցի վերջնական ընտրանք

Եթե այս մեթոդաբանությունը ընդունվի, քաղաքացիական ասամբլեան կունենա մասնակիցների հետևյալ բաշխվածությունը՝

Խումբ	№	Սեռ	№	Տարիք	№	Կրթություն	№	Երկիր/Բնակավայր	№
Սփյուռք	100	Արական	96	18-30	44	Միջնակարգ կամ ավելի ցածր	74	Երևան	34

Հայաստան	90	Իզական	104	31-45	57	Ավագ դպրոց կամ միջին մասնագիտական	64	Ստեփանակերտ	5
Արցախ	10			46-60	49	Բուհ և ավելի բարձր	62	Այլ քաղաքային (Հայաստան և Արցախ)	27
				61+	50			Գյուղական (Հայաստան և Արցախ)	34
								ԱՄՆ	20
								Ֆրանսիա	9
								Եվրոպա (բցռ. Ֆրանսիա)	6
								Ռուսաստան	39
								Վրաստան	6
								Նախկին ԽՄ (բցռ. Ռուսաստան և Վրաստան)	6
								Մերձավոր Արևելք (բցռ. Թուրքիա և Իրան)	8
								Լատինական Ամերիկա	3
								Այլ երկրներ	3
Ընդամենը	200	Ընդամենը	200	Ընդամենը	200	Ընդամենը	200	Ընդամենը	200

Աղյուսակ 3. Վերջնական ընտրանք՝ ըստ սեռի, սարիքի, կրթության և վայրի խմբերի